ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԻ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետութեան նոր վարչատարածքային բաժանումը (11 մարզերի դրոյթը),

Նկատի ունենալով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հովուական, կրօնական ժողովրդական գործունէութեան զօրացման եւ գործնական արդիւնաւորման անհրաժեշտութիւնը,

Նկատի ունենալով նաեւ պատմական անցեալի որոշ աւանդոյթները,

Յետ խորհրդակցութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի Հայաստանում ապրող եւ գործող անդամների հետ,

Այսու Հայրապետական պաշտօնագրով կատարում ենք հետեւեալ բարեփոխութիւնները մեր եկեղեցու թեմական կառուցուածքային բնագաւառում.-

Սոյն պաշտօնագրով Հայաստանի Հանրապետութեան տարածքում մեր եկեղեցու թեմերը կարգաւորում ենք ըստ հետեւեալին.-

1. Այրարատեան Հայրապետական Թեմ՝ ներառնելով Երեւան մայրաքաղաքը եւ Արարատի մարզը:

- Առաջնորդական փոխանորդ՝ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Ներսիսեան

2. Շիրակի Թեմ՝ ներառնելով Շիրակի մարզը:

- Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգորիս Արքեպս. Բունիաթեան

3. Գուգարաց Թեմ՝ ներառնելով Լոռիի եւ Տավուշի մարզերը:

- Առաջնորդ՝ Հոգշ. Տ. Սեպուհ Վրդ. Զուլչեան

4. Սիւնեաց Թեմ՝ ներառնելով Սիւնիքի եւ Վայոց Ձորի մարզերը:

- Առաջնորդ՝ Հոգշ. Տ. Աբրահամ Վրդ. Մկրտչեան

digitised by A.R.A.R.@

5. Արմավիրի Թեմ՝ ներառնելով Արմավիրի մարզը:

- *Առաջնորդ՝ Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Արիստակէսեան*

6. Արագածոտնի Թեմ՝ ներառնելով Արագածոտնի մարզը:

- *Առաջնորդ՝ Հոգշ. Նաւասարդ Վրդ. Կճոյեան*

7. Գեղարքունեաց Թեմ՝ ներառնելով Գեղարքունիքի մարզը:

- *Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անանիա Եպս. Արապաճեան*

8. Կոտայքի Թեմ՝ ներառնելով Կոտայքի մարզը:

- *Առաջնորդ՝ Հոգշ. Տ. Առաքել Վրդ. Քարամեան*

Հրահանգել ենք բոլոր նոր նշանակեալ թեմական Առաջնորդներին որ շրջագայեն իրենց համար նշանակուած թեմական ծառայութեան շրջանները եւ ուսումնասիրեն այժմեան կացութիւնը կրօնական-եկեղեցական-հոգեւոր մարզերում, վիճակագրական տուեալները ձեռք բերեն առարկայական ստուգումներով, նշանակեն առժամեայ թեմական խորհուրդներ իրենց թեմի ընդհանուր գործերի ղեկավարման համար, կազմեն եկեղեցական ծուխեր եւ զբաղուեն իրենց թեմերի կրօնական կեանքի զարգացման ծրագրերով:

Սպասում ենք մեր հայրենի կառավարութիւնից եւ մարզերի պետերից եւ քաղաքային իշխանութիւններից հարկ եղած աջակցութիւնը ընձեռել բոլոր Թեմերի Առաջնորդների եկեղեցական գործունէութիւնների բարւոք ընթացմանը համար:

Յորդորում ենք մեր սիրեցեալ ժողովրդի զաւակներին, որ բոլոր Թեմերում կրօնական վերարթնութեան՝ առողջ գիտակցութեամբ ընդառաջ գնան Թեմական Առաջնորդների հովուական, կազմակերպական, քարոզչական աշխատանքներին բոլորին յիշեցնելով մեր Ս. Եկեղեցու խորախորհուրդ շարականի բառերը.-

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի»:

digitised by A.R.A.R.@

Հայաստանի Հանրապետութեան այս յառաջագնաց կեանքում թող մեր ազգային եկեղեցու հարազատ աւանդոյթները, քրիստոնէական հաւատքի որպէս ճշմարիտ արտայայտութիւն, վերակենդանանան մեր ժողովրդի առօրեայ հասարակական կեանքում:

Այս նախանձախնդրութեամբ՝ ողջունում ենք բոլորիդ եւ սպասում որ հոգեւոր վերազարթօնքի շարժումը վերստին տարածուի մեր մայր հայրենիքում եւ համայն հայ ժողովրդի կեանքում:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 Մայիս, 1996
Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@